

ՏԱՌՈՒՄ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Կը Հրատարակուի Շաբաթը մի Անգամ

ՔԱՅՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար տարեկան 10 ֆր.
» » վեցամսեայ 5 »
Արտատահմանի համար տարեկ. 12 »
» » վեցամսեայ 6 »
ՎԱՐՄԱՐՈՒՆՔ ԿԱՆԻՒԿ

Նամակ, ծրար եւ այլ պէտք է դրել հետեւեալ հասցեով
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՉԱՔՐԵԱՆ

Տէր և Խմբագիր Յարութեան շաբաթաթերթի

Х. Чанжрянъ
Редакторъ на вѣстникъ
„ДАВРОСЪ“
Варна България
Отговорникъ Н. Драгулевъ

H. TCHAKERIAN
Rédacteur du Journal
DAVROS
Varna (Bulgarie).

ՊԱՅՄԱՆՔ

Խմբագրութեան եկամ գրութիւնք կը հրատարակուին մասամբ կամ ամբողջութեամբ: Հրատարակուած ու չը հրատարակուած ձեռագիրներ եւ չեն արուիր: Դանուցման տողը 20 միլիմ. է: Երեքէն աւելի անգամներու համար զատ սակարկութիւն: Դանուցմունք կ'ընդունուին ամէն լեզուաւ:

Ա. ՏԱՐԻ

ԵՐԵՎԱՆԻ 5 ՄԱՅ 1898

ԹԻՒ 12

ԼԵՌԱՆ ՄԱՐԴԸ

Դարձեալ կ'ըսեմ թէ՛ ի՞նչ պէտք է ընենք:

Ամէն հայու սերտած դասն է կարծես այս: Բարեւելէ առաջ, բարեւելէ ետք, հարցնել թէ՛ ի՞նչ պէտք է ընենք. ի՞նչ պիտի ըլլայ վերջը. մինչեւ ե՛րբ այսպէս եւնա:

Մենք այս հարցումին կամ հարցումներուն անցեալ տարի Յունիս 15 թիւ «Երասակ»-ով պատասխանած ենք և ըսած ենք թէ, ինչ որ պէտք էր ընենք ասկէ 42 տարի առաջ, այսինքն 1856 էն առաջ. ինչ որ պէտք էր ընենք ասկէ 20 տարի առաջ, 1878 էն առաջ. ինչ որ պէտք էր ընենք մինչև հիմա, առհասարակ Ռուս-թուրք պատերազմէն, ընէն առաջ...

Բեռնակիր շոգենաւ կամ շոգեկառք կուգան ու կ'երթան, այն առեւտրականը կամ վաճառականը որ, պատրաստի ապրանք ունի կը բեռնէ ու կը շահի, դէպքերն ու հանգամանքներն ալ շոգենաւի մը ու շոգեկառքի մը պէս կուգան ու կ'երթան. եւ այն ազգերն ու ժողովուրդները կ'օգտուին, որոնք պատրաստուած են ու առձեռն պատրաստութիւն ունին: Մեծապատիւ Հայոց ազգը ի՞նչ ունէր այդ բարեպատեհ ժամանակի առջեւ և ի՞նչ ունինք այսօր, խնդիր մը՝ որ պէտք չէ վրիպի անկեղծ խորհողներու համար...

Մենք ոչ թէ «կատակով» կամ «ճաւրոսով» ըսած ենք մեր ըսելիքները, այլ անոնցմէ շատ առաջ, Սուլթանական քաղաքին մէջ ու անոր քիւն տակ, «Հայրենիք»-ի, «Լոյս»-ի, «Մասիս»-ի և «Մանգու»-ի մէջ բացարձակ կերպով գրած ենք թէ՛ Հայկական խնդիրը առաջ գնալու համար ի՞նչ ոտքերու պէտք ունի. թէ ինչե՛ր խօսած ենք կրօնական արշաւանի ի կիցիկիս վերնագրին տակ: Հարկ չենք տեսներ վերատպել ու կրկնել մեր հին ըսածները, հետաքրքիրը կարող է

ան ժամանակուան ոչ միայն հայկական այլ օտար թերթերն ալ թղթատել, Լա թիւռքի, Սթամպուլ, Թան, Տէպա ֆուսսերէն լրագիրները. Թարիք, Հագիգաթ թուրքերէն լրագիրները. Տէյի Նիուզ, Թայիզանգիդիականները հասկնալու համար թէ՛ «Տաւրոս»-ի խմբագիրը խեղճ լեռան մարգ, տարաբախտ Չէլիօղլուին ի՞նչ ըսած է, ի՞նչ գրած է և թէ ուրիշները ի՞նչ խօսած ու գրած են իրեն համար:

Այդ ամէնքը այսօր անցած գացած բաներ են, ու դարձեալ որոտաձայն կ'ազդակենք թէ մինչև որ հայ ժողովուրդը չը լուսամտի, չը լուսարանուի ու իր փափաքած ազատուի ետքը համար հարկ և անհրաժեշտ եղած պատրաստութիւնը չը տեսնէ, ժամանակները կը հոլովին, կուգան, կ'անցնին ու ինքը այս վիճակին մէջ կը մնայ գերի ու ստրուկ, բացազանջ լով միշտ թէ՛ ի՞նչ պիտի ընենք, ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը:

Ուրիշ ատեն աւելի ընդարձակ գրելու խոստումով, հիմակուհիմա կ'ըսենք թէ՛ ընդհանուր ազգային միութիւնը հարկաւոր է. թէ ամէն քաղաք, ամէն շրջանակ պէտք է ունենայ իր տեղական միութեան մարմինը, ընթերցարան, լսարան և խօսարան յարկերը, որոնց մէջ խօսուին, քարոզուին ու լուսարանուին ազգին ու հայրենիքին օգտակար ըլլալիք ամէն մէկ նիւթերը:

Ներկայիս աւելորդ չենք համարել իւրաքանչիւր լսարանի կամ խօսարանի համար իմաստասիրութեան հարկ անհրաժեշտ եղած նիւթոց ցանկ մը ներկայացնել, որն որ խորհուրդ տուած է մեզ մի հանրաժանօթ պատկառելի հայ անձնաւորութիւն:

Ահաւասիկ ցուցակ մը մասնագէտներու կողմանէ ընդլայնեալ, քարոզելու ազգային ընթերցարաններու և խօսարաններու մէջ:

1. — Հայ գաղթականութիւնը:
2. — Հայերու ապագան ո՛րը

ըլլալու է, և մեր առայժմ ընելիքը ի՞նչ է:

3. — Ազգասիրութիւն այսինքն զահարութիւն:

4. — Մահմետական պետութեան հետ ի՞նչպէս վարուել պէտք է:

5. — Ի՞նչ կերպով պիտի լինին մեր յարաբերութիւնները լուսաւոր ազգաց հետ:

6. — Ազգին ուղղութիւն տուող մի հեղինակաւոր մարմին ունի հեղինակաւոր օրգան պէտք է թէ ոչ, թէ իւրաքանչիւր մարդ կրնա՞, ու՞զածը սորվեցնել:

7. — Թուրք կառավարութիւնը կրնա՞յ բարենորոգմունք գործադրել և ո՛րքան:

8. — Ռուսահայոց վիճակը և անոնց ընելիքը:

9. — Ի՞նչ պէտք է պահանջել Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքարաններէն, ի՞նչ կրնան ընել և ի՞նչ չեն կրնան ընել:

10. — Չէլիօղլու և իր գերը անցեալին մէջ, գալիքին մէջ:

11. — Պոլսոյ մէջ կրթութիւնը և հայ վարժապետութեան դերը ու արդիւնքը:

12. — Լրագրութիւնը հայոց մէջ:

13. — Ընթերցանութիւն, ընթերցասիրութիւն և ընթերցարաններ:

14. — Մարդը ազգային կրթութիւն մի բարձր ուսումնարանով:

15. — Ռուսական պետութեան հետ ի՞նչպէս վարուելու ենք:

16. — Արապականի այսինքն Պարսկաստանի հայոց նշանակութիւնը ընդհ. հայութեան համար:

17. — Հայ լուսաւորչական հոգեւորականութիւնը ինչո՞ւ այս վերջին աղէտներու ժամանակ չը համապատասխանեց իր սրբազան կոչման, և ի՞նչ ընել պէտք է զայն բարձրացնելու համար:

18. — Մահմետականաց սուրբ գիրքը (զուրան) և մահմետական աւանդութիւնք (հատիս):

19. — Կաթողիկոսութեան նըշաւակութիւնը:

20. — Քրիստոնէութիւնը հայոց

համար այս աշխարհքի մէջ օգտակար եղած է և այսուհետեւ ալ կրնա՞յ օգտակար ըլլալ:

22. — Հայաստանի կարօտեաններուն ի՞նչպէս կրնանք օգնել:

22. — Ի՞նչ պէտք է ընել որ հայ գաղթականութիւնը աշխարհքի աւան կողմը չանհետանայ, չբիճանայ:

23. — Գաղթականները ի՞նչ ընթացք բռնելու են որ հայ անունը չարատաւորի, չաղտոտի:

24. — Կրօնք և ազգութիւն (կրօնական բացարձակ ազատութիւն):

25. — Չե՞նք կրնոր արդեօք մահմետականներուն քրիստոնէութիւն սորվեցնել:

26. — Ի՞նչ պարտականութիւն պէտք է կատարենք գաղթած երեւելիներէն թէ՛ կառավարութեան և թէ՛ տեղացի ժողովուրդին հանդէպ:

27. — Կուսակցութիւնը մեր մէջ և անոնց օգուտը ու վնասը:

28. — Հայերն յ՝ Սմերիկա — ինչո՞ւ մօտ Եւրոպան կը թողունք և Սմերիկա կ'երթանք:

29. — Տեւորական գործողութիւնք յեղափոխականներու կողմէ:

30. — Ազգիս անունը արատաւորողին և անոր ճակատագիրը իրեն շահատակութեան առպարէզ ընողին ի՞նչ պատիժ տալու է:

31. — Ազգային թէ՛ կրթական և թէ՛ քաղաքական կեդրոն մը հաստատել ո՞ւր յարմար է, կիպրոս թէ՛ Պուլկարիո:

32. — Արդեօք մեզ մի հայկական ատենային այսինքն դատարան ունենալ պէտք չէ՞ ազգային խնդիրները հոն լուծելու համար, և ո՞ր:

Ահա՛, սոքա են մեր այս օրուն ընելիք պատրաստութիւնները, իսկ երբ կը լուսարանուին այս մտքերը և գիտակցութիւնը կուգայ տիրապետել մեր մէջ, այն օրը արդէն ազատուած ենք, մեր փափաքները կատարուած են և հայ ժողովուրդը երջանիկ է:

ԴԱՇՆԱԿԱՅԱԿԱՆՆԵՐԸ ՊԱՐԿԱՍՏԱՆՈՒՄ

(Շար. 11 թիւէն)

Ամէն անգամ երբ գրիչ եմ ձեռք առնում մեր Յեղափոխական փշոտ ու անձուկ ասպարէզի վրայ յաճախ երեւոյց ալդ յետին մտքերով գիտակաւոր — պընակալէզ գործիչներին — մեր ներքին ցեղերի և իրենց ամբողջ իրականութեամբ գգուելի ոճրագործութիւնները, խայտառակ և կորստաբեր գործունէութիւնները նկարագրելու իրենց իսկական գոյնիւրով։ Ամէն անգամ իբրեւ բուն Յեղափոխական կեդրոնավայրի մի գաւակ ապա և ուրեմն անձնապէս, նիւթապէս և որ գլխաւորն է՝ բարոյապէս կրած մահմետական բռնակալութեան սոսկալի գրկանքներն ու հալածանքները, իրր գէպի հանրութիւնն, գէպի հայ ժողովրդի Ս. Գործի շահերն զգացածս պարտականութեան բուն մղումը կը ստիպեցնէ ինձ պատեւել հասարակութեան առաջ այդ Ս. Գործի վեհ անուան և կոչման տակ վարած գոյութեամբ խաբեբաների գիտակները, այդ ժամերում հոգեկան ճնշող դրութեան մը երթարկութեամբ և կը յիշեմ պատմագրի խօսքը «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ» կը յիշեմ այդ տխրագէցիկ խօսքը եւ իմ առջեւ կը պատկերանայ Տաճկա-Հայաստանը իր անցեալ և ներկայ արիւնշաների լեռներին, գետերին և Հայ նահատակների գիտակներով լի ձորերի, լճերի, մոխրակոյտ դարձած քաղաքների, գիւղերի, սովալլուկ որբերի և «զարկա-զուրկէթ» գաղթականների աղետարար և սրտախորով տեսարաններով բայց յուսահատութիւն, ո՛չ երբէք :

Հայ դարաստանի ժրջան մշակ, լըռիկ ու միջիկ առաջ գնա՛, յարատեւի քրոնաթոր աշխատութիւնդ, մաքրէ դարաստանդ փուշ ու տատակներդ եւ անկասկած նպատակդ պիտի հասնիս, պիտի գարնէ հայ ժողովրդի բարօրութեան ժամը, պիտի սրբուի, գաղբի թշուառի արիւնալի արտասուքը։ Հայ Յեղափոխական դարաստանը սրբապղծող ոճրագործ-եղբայրասպանները, խաբեբայ գիտակաւորները պիտի չքանան ասպարիզից, այլ ևս հայ ժողովրդը չպիտի լսէ նրանց օգաղղորդ գոռում գոչումները, հրապարակային չարչիական ինքնավաճառութիւնները, կեղտոտ յիշատակարանները, հապա աղնիւ, անձնուէր սրտի միութիւնը, եղբայրութիւնը եւ ճշմարտութեան յաղթանակը պիտի տրիք։ Լռիկ ու միջիկ աշխատաւոր Յեղափոխական լուրջ մարմինը՝ տանջուած ժողովուրդին պատու պարող մաքուր և հաստատուն Շէն-Քէ պիտի կառուցանէ և անա այն ժամանակ Ազատութեան այդ սրբազան Տաճարի ճակատին ծածանող Հայկական Դրօշակի վրայ փոխանակ «Ողբամք»-ի, մենք կը կարդանք «Գովե՛մք զքեզ Հայոց աշխարհ» :

Դէ՛հ, ուրեմն ազնիւ սրտեր, յանուն Ս. Գործի, յանուն այդ Ս. Տաճարի կառուցման ձեռք ձեռքի տանք եւ միասին մաքրենք մեր Յեղափոխական ճանապարհը այդ ներքին ցեղերից և խոչնդոտներից։ Իսկ մենք կը դառնանք նորից մեր խնդրին։

Վեհաժողովի լուրը յամառութեամբ սկսեց չըջել յունիսի սկզբից, միա՛միտ հայդուկներից շատերը սկսեցին հաւատալ այդ «խոշոր սուտ»ին. Կոմիտէն վատ գէնք չէր ընտրել պարզամիտ հայդուկներին խաբելու համար։ Ո՛րտեղ գնայիք, ո՛ր կողմ դառնայիք այս էր լուռւմ. «Այո՛, Դաշնակցականները չուտով պիտի ազատեն Հայաստանը, գուցէ երկու ամսից յետոյ, գուցէ բանգայի և միաժամանակ իրանասորի ցոյ-

ցից յետոյ, որովհետեւ Վեհաժողովում այդ երկու զօրեղ յաղից ցոյցերը վերջապէս պիտի ստիպեն վեհապետներին լուծել Հայկական հարցը, ապա եւ ուրեմն ոչինչ չպէտք է խնայել այդ անձնուէրաց Դաշնակցականներին» : Այո՛, միա՛միտ ժողովուրդ, ոչինչ չպէտք է խնայել զրանց, տալ միշտ, հետեւիլ եւ չարաչար խաբուել այդպէսներին։ Խոշոր սուտը գնալով հայդուկների և ժողովուրդին մէջ իրողութեան կերպարանք էր առնում։ Արտասանմանից ըստացած ոչ մի լրագրում եւ նամակներում Եւրոպայի մէջ 1897ի օգոստոս 15ին կայանալիք Վեհաժողովի մասին երբէք մի լուր կամ գրութիւն մը չը կար, ինչպէս որ գոյութիւն էլ չուներ։ Գաւ այդ տեսակ մի կօնգրէս։ Հաստատապէս այդ լուրը Կոմիտէն դուրս հանեց, խոշոր սուտի աղբիւրը ուրեմն Կոմիտէն էր։ Ի բաց առեալ այդ տարածայնութիւնը փողն էլ շատ գործ տեսաւ։ Վասպուրականցու շուրջը եղող հայդուկները նախ խոշոր սուտով խաբուեցան, և ապա դրամի և արշաւախմբի մէջ հարկւրպետ, խմբապետ լինելու խոստումներով։ Վասպուրականի ներկայացուցիչը ինչպէս առաջ նոյնպէս եւ մինչեւ վերջն էլ պարզում էր նրանց առաջ երկրի հանգամանքները, տիրող պայմանները, եւ Ատրբայատականի Հայ տարրի ի՛նչ սոսկալի դրութեան երթարկութիւնը, բաց ի դիտ երկրի մէջ եղած ժողովուրդի դրութիւնը այդ տեսակ մի քայլից յետոյ, վերջ ի վերջոյ նա ստիպուած եղաւ գոնէ Ատրբայատականը չաւրելու նպատակով, առաջարկել բուն երկրի մէջ, անցնիլ ներսերը եւ այնտեղ անել արշաւանքը մի որոշ դիրք գրաւելուց յետոյ. այո՛, երբ վերջնականապէս համոզուեցաւ թէ իրանասորում պիտի անեն ցոյցը, նա նախընտրեց գոնէ ներսումը անել եւ կռուիլ ու կռուիլ մինչեւ վերջին գինւորը, վերջին փամփուշտը։ Բայց այդ դէպքում մեր քաջերին մահ՛կ ապստանար։ Նրա ջանքերը անօգուտ եղան, իսկ խօսքերը «Ջայն բարբառոյ յանապատի»։ Վասպուրականից հրաժարուեց իսպառ գործակցիւրը այդպէսների հետ։ Ժիզուրիական միջոցներով, Ռօտէնական էնթրիքաներով կաշառուած հայդուկներից ոմանք հարկւրպետ, հրամանատար եւն. կարգուեցան։

Արշաւախմբի ընդհանուր հրամանատարը այնպէս անփորձ մէկն էր, որին իրաւ մենք մեր տրամադրութեան տակ եղած խմբի մէջ իբրեւ հասարակ հայդուկ մը ընդունում էինք, չափելով ի հարկէ իր ամէն մի կարողութիւնները, և անա այդպէս իսկ եւ երեսայ ուժերը գործի գլուխ էին անցնում եւ հրամանատարութիւն եւն. անում այդ տեսակ միջնական գործերի մէջ։ Քանի որ լեռան մէջ ինքն իրենց կառավարելու չափ ընդունակութիւն չուներ, մի՛թէ ներքին մէջ ժողովրդի դառն քըրտանց արդիւնքները, գէնքերը եւ քաջ բայց միա՛միտ հայդուկները այդտեսակ ոչ մի փորձառութիւն չունեցող տղա-ների ձեռք յանձնել։ Ի՞նչ անխղճութիւն, և ապա Դրօշակի էջերով գեղեցիկ գոյներով նկարագրել ի փառս եւ ի պարծանս ամենայաղթ դաշնակցութեան Մի՛թէ Հայաստանի հողի վրայ ոտք դնողը հերոս կը դառնայ։ Երբէ՛ք։ Երկուր պայքարից յետոյ Վասպուրականի ներկայացուցիչը «ազատ արձակուեցաւ» կուսակցութիւնից։ Առանց այն էլ հրաժարուած էր արդէն։ Օ՛հ, Սադաշէնների հետ գործ ունենալուց դադարեց նա, դժուարի որդիների հետ միեւնոյն չըջանում լինելուց ազատուեց, այդ մասին իր անհուն չընդունակութիւնը յայտնեց իր ժամանակին ինքնակոչ «ազատ արձակուեցաւ»-ին։

Խնջոյքները, ուրախութիւնները անպակաս էին, փողի շուրջ ծախսելուն հաշիւ չկար Հայ տարրը տեսնելով կարգ մը զգուշի արարքներ, բոլորովին երես էր դարձել, վերջապէս 1897 յուլիս 21ի երեկոյան 328 հոգուց բաղկացած արշաւախումբը պատրաստուեց գառնով, խորովածով, նուշ ու չաքարով, օղիով և գինիով — եթէ կարելի լինէր մէկ մէկ սիրուհիներով — (բացառութեանց մասին չէ մեր խօսքը) եւ դուրս եկաւ խումբը մինչեւ տան դռանը առաջ, այսինքն իրանասոր . . . : Երթա՛ք բարեաւ, բայց քիչ մը անձնութիւն :

(Շարունակելի) ՈՍԿԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

ՄԵՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Դ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Այս քանի մը միջանկեալ գիտութիւններն անոր համար ըրինք որ աւելի բացորոշ կերպով, աւելի մեքիպացած վիճակի մը մէջ երեւան բերէինք Պ. Ե . . . ի բոլոր գործունէութիւնն, այն մարդուն՝ որ տարի մը առաջ եղբայրութեան համար իր սիրտը, իր հոգին և իր ամբողջ էութիւնը տուող երիտասարդ մը կրցած էր իրեն գործիք ընել, ամեն բանի մէջ զանի նետել ու վերջապէս ամեն գէշ հետեւանքներուն պատճառներն ալ անոր վերագրել։ «Տաւրոսի բուն ուղղութիւնն արդէն այդ կարգի մութին մէջ գործողները գտնել է. հետեւաբար մեր պարտականութիւնը թուրք ըլլայ զանի մեք մեքիպացնել տեսարանի մը վրայ բերել։

Արդ, շատ կը ցաւինք և խորապէս կը ցաւինք որ այդ մարդուն ձեռքը գործիք կը գառնար նաեւ մեր համակերի անձնուէրացը, առանց գիտնալու թէ օր մը պիտի զղջայ, բայց այդ զղջումը գուցէ շատ ո՛ւշ է :

Այո՛, մութեան ինչիւրը ջիզերուն կը դալէր Պ. Ե . . . ին, որ անշուշտ վառնա երթալ գալու երթեւեկութեան համար 120 ֆրանք ծախք մը չի պիտի կարենար այնուհետեւ ցոյց տալ այն մարդոց, որոնք մարդասէսներն ալ պէս անոր հրամանին կ'սպասէին և անոր բերնէն ելած խօսքերը մէկ մէկ պատգամներ կ'ընդունէին։ Օ՛հ, ժողովուրդ, կը տեսնե՛ս թէ ինչո՛ւ չեն ուղեր միանալ, ինչո՛ւ կ'ըլլային այդ բոլոր ժողովները և ինչո՛ւ գիշերով սկսան համոզել խեղճ գաւառացիները և ցերեկով ալ սկսան ամեն անարգ միջոցներու գիմել։ Ո՛հ, մութ էր քեզի համար այս բոլորը և դուն չէիր գիտեր թէ ամբողջ քաղաքը խառնակութեան, անիշխանութեան ու երկու հակառակ կուսակցութեան մէջ գնելով, առանց նպատակը Միութեան խնդիրը խեղդելն էր։ Ո՛հ ապաքէն ապակեգրներում մէջ ալ այդպէս կարենաւ յին տեղական անառիկ դիրք մը գրաւել և իրենց հակա ամբողջութեւն

վրայ Դաշնակցութեան Մարտի հիւսած Դրօշակը պարզել, որուն յաղթական տառերը Շարաֆի արիւնով ներկուած էին Եթէ ասիկա յաջողուէ՛ր, ահաւասիկ բուն զօրութիւնը, բուն շահատակութեանց միջոցը և բուն ճիշդագիտական ընկերութեան մը պայմանագրութիւնը։ Խեղճ միամիտ ժողովուրդ, թուրքերէն հարստահարութեց. յետոյ, մի՛թէ խաչագողներու ձեռքը պիտի ինչայի՛ր :

Ո՛հ, ո՛չ, մի՛ զայրանար, մի՛ ցաւիր և ո՛չ ալ սարսափիր այն բժշկէն՝ որ ճշմարիտ կերպով ցոյց կուտայ քու ներքին ամենէն վտանգաւոր, ամենէն մահացու և սրտիդ մէջ խուրճիկ, շատ խորունկ իջնող վէրքը։ Գիտեմ, դուն զգուած ես Հնչակեաններէն, զգուած ես Դաշնակցականներէն և ի՛նչ բրած են կրօնս Արմէնականները։ Բայց ատոնք պատճառ մը չեն որ դուն քու ճակատագիրդ վճռելու կարող ըլլաս։

Այդ կուսակցութիւնները քու կաշիդ քերթեցին հանեցին, քու միտդ հալեցուցին ու իրենց դանակը քու սովորիդ կը զարնեն։ Մի՛թէ կուզես լռի՛ն, անխօսու՛կ ու ցաւաւ գի՛ն կերպով անհետանալ և բոլորովին բնաջնջ ըլլալ։ Մի՛նչեւ կարող ես այդ կուսակցութիւնները քու ձեռքիդ մէջ ճղմել, մէկ խմոր ընել, և այնպէս անոնց վրայ գուրդուարու տշխառիլ։

Օ՛հ, քննէ՛ք անգամ մը թէ Ֆիլիպէի մէջ ինչո՛ւ այդ քան յանկարծակի կերպով ծագում կ'առնէր Միութեան խնդիրը։ Շատ երկար օրէն խօսելու հարկ չը կայ, երբոր կուզենք ուղարկուեցանք թէ ամենէն աւելի ժողովրդական յուսահատութիւնն և լրագրիւններու մէջ բացարձակ կերպով յայտնուած Միութեան անկարելիութիւնն էին, ուրոնք ծնունդ տուին այդ արդարացի պահանջին։ Պարկագի առաջին կայարաններէն սկսելով մինչեւ Ֆիլիպէ, — այդ բոլոր կայարաններու մէջ գտնուած բեռնակիր Մշեցիները, Վանեցիները, Արապկերցիներն և Հայաստանի խորերէն հոնեղ կծկուած գաւառացիները հազարաւոր ուկիներ սուտած էին Դաշնակցականներուն, — ատոնք էին բողբոջները։

— Հայաստանի փրկութեան գործը Դաշնակցութեան ծրագրին մէջ ամենէն աւելի բացորոշ կերպով կարատայաւոր, — կ'ըսէր ինծի սեղանաւոր մը, որ Ֆիլիպէի մէջ ինքզինքը բարձրէն ծախուող մը ծառով յուսակնութիւնն ունի, — ինչո՛ւ համար չէք ու գեր ձուլել այդ կուսակցութեան հետ։

Սեղանաւորին երեսը նոյնցայ։ Մտածեցի որ դուրս անանկ մտուրդու մը հետ էր, որուն աչքը մինչև իրիկուն ոսկին տեսած և գաղափարը զայն շահելու ջանքը միայն եղած էին։ Ի՛նչ պատասխանէի. Մի՛թէ միեւնոյն գաղափարը տալուին յայտնողներ պիտի ըլլային։ Աստուած ի՛մ :

— Գուք կ'երեւի որ այդ ծրագիրը չէք կարգացրել, Պարոն, ըսի յուզուած չեղածով մը։ Մանուկները կը ցաւիմ որ չէք կարգար բոլոր այն լրագիրները, յետեւեցանք եւ ճշմարիտ հայրենասէրներու յայտնի բողոքները Դաշնակցութիւնը կրնաք պարզապէս տեսարանի մը վրայ եւ լեւակայել այն ամբողջի, նախաւ ապից ու գծուած գերերու մէջ, այն ցնորական ու ազգապաշտ մտածումներու մէջ և այն յիմարական ու անխորհուրդ հայեացքներու մէջ, որոնց մանրանկարը տեսանք Ֆիլիպպի վարժարանի յարկին առկա Միթէ Պոլի առաջին ցոյցը հապճեպ և կուսակցական ուժ մը գոյացնելու գիտումով չէ՞ր որ կատարուեցաւ, այն արիւնալի ցոյցը՝ որ մեր ազգայն ապամոլութեան մէջ սեւ էջեր պիտի սենեայ, ինչպէս ունեցաւ Հնչակեաններու անխորհուրդ մէկ քայլը։ Ինչո՞վ կուզէք որ հաստատեմ թէ ծրագիրն էր վտանգաւոր, ո՞չ թէ Դաշնակցականները, որովհետեւ անոնց մէջ ճշմարիտ հայրենասէրներ ալ կան, որոնք ստիպուած էին հազանդիւ ծրագրի արտահրաժ ընդապետաւ կան կանոններուն։

— Շատ ազեկ, ուրեմն ծրագիրն զէմ կուզեցէք, ինչո՞ւ համար անձերուն ալ հարուածներ տարւել կ'աշխատիք։

— Սխալ է ձեր կարծիքը։ Մեր նպատակը Դաշնակցականներու ձեռքը նոր գոյութիւններով յորինուած ծրագիր մը տալ չէ, այլ քանի որ երեք ուղի կուսակցութիւններ կան և սոսոր առանձն իրարու զօրութիւնը կը ջլատեն և զիրար կը չեզոքացնեն, ահա՛ ատենց արարքներուն զէմ է մեր բողոքը, մեր արգարացի պահանջը։

— Ի՞նչ կ'ուզէք...
— Կ'ուզենք որ ատենք միասին, փոխանակ խաբելու, վրասն ալ ցոյց տան, շահն ալ։
Սեղանաւորը լռեց ու համոզուեցաւ։ Այսպէս շատերու հետ կը խօսիմ, որոնք կը վիճաբանին, կը խոստովանին և ոսկայն դարման մը մտածելու ժամանակ ինչո՞ւս պէտք... և կ'ըսէին։

Իրաւ է որ սոսկում կ'ազդէ մեզի, երբ կը մտածենք թէ Պուլկարական ազատ քաղաքներու մէջ կը գտնուին հայեր, որոնք անտարբերութեամբ կը դիտեն յեղափոխական գաղափարի անկումը, կը դիտեն իրենց մէջ սպրդող ֆ. Ե. և Գ. փետի անդամ եմ. ըսող քանի մը յայտնի նպատակներ ունեցող անձերու պէս խառնակիչները և ուսկայն իրենց վաճառատուններու մէջ կ'ընդունին և բարեկամաբար աշխոյժ հետ կը աշխտեն։

— Ի՞նչ ընեն, պարոն, — կ'առարկէր ինծի վաճառական մը, — վերջապէս նկատուեանք ունին։

— Ի՞նչ նկատուեանք ունին, հարցուցի։

— Կը կասկածի՞ն... կը հասկընաք։

Է՛հ, այս աստիճան սոսկալ այն մարդէն, որ ամբողջ քաղաքը խառնակողն էր։ Սոսկալ, որովհետեւ յեղափոխական կարծուած էր, որովհետեւ Դաշնակցութեան Գոմիթէան պետն էր, սոսկալ... Ո՛հ, անիկա գարշելի բան էր։

Ու մտածել թէ այս մարդն էր Միթէան գաղափարին հակառակորդը, զայն անկարելի ընողը, ինքն անձնուրաց երիտասարդ մը բողոքովին խայտառակել տուողը, «Մայր-Հայրենիքի մէջ կուտելու գաղափարը և վերագործող» պարոնին մինչեւ պոռոտութեան բեմը հանողը... մտածել թէ այս անձն էր որ «Սեպեալ Դաշնակցութեան» Պարոն Յակոբիկը տիկի մը պէս հոս վերով լեցնողը... Մտածել այս բողոքը, արդարեւ զարհուրելի բան է։ Ո՛հ, Տոլարներ, Տոլարներ... Մենք ուրիշ յողուածով մը բոլորովին պիտի մերկացնենք քանի մը անձնաւորութիւններ ալ, որոնք Գոմիթէան են եղբւր, բայց մութին մէջ կը գործեն։ Այնո՞ք որ Օթէլ Եւրոպի սրահներուն մէջ գարեջուրի գաւաթները կը պարպէին...։

ԱՆԿՈՂՄՆԱԿԱՆ ՄԸ
1898 Ապրիլ 20.
Ֆ. Պոլիս։

Առ Ի. Տ.
ԱՆԳՆԱԶԱՏ ԿԱՄԱՐԱՐԸ

Բախտի բերամբ մէկէն ինկայ,
Հիւանդոսնոցն Բարաքէվայ,
Որ կառուցուած է իւր ծախքով,
Փոքրիկ քաղաքն ի վառնայ,
Անմահ է։

Հիւանդանոց այնպէս տեղ մ'է,
Դեռ ինձ նման շատեր գիտեն,
Չքաւորաց թէ աղքատաց,
Կ'ըսուէր միայն սահմանուած է,
Սխալ է։

Ներս կը մտնաս, կարգաւ չարուած,
Հիւանդ, գունատ դէմքեր պտկած,
Կարծես սոքա, ե՛րբ անտէրներ,
Կամ մոռցուած աղքատներ,
Այնպէս չէ։

Մէկը զո՛ւ է եղած բախտին,
Կամ կ'ողջ մը անխելճ կամքին,
Ա՛խ, օ՛հ, վա՛յ, ո՛չ ձայներ լսե՛ս,
Ազատութեան ալ յոյս ունին,
Խեղճները։

Կան անոնց մէջ խելքով խելճեր,
Կամ լուս եւս է չիտակ ըսել,
Մամոնայէ զրկեալ անձեր,
Կ'սպասեն դեռ հարուստ օրեր,
Կարծիք է։

Հոս ունէի մի մահճակալ,
Մէկ քովս կար ախտով հիւժեալ,
Մահուան դէմ շատ կը մաքաւէր,
Ազատութեան մեծ յոյս ունէր,
Երազ էր։

Գիտէք ո՞վ էր այն անձը,
Բարձրահասակ սրտոտ մարդը,
Քաջ զինուոր մ'էր կամաւոր,
Ազատելու հայրենիքը,
Յոյս մըն էր։

Ունէր երկու որդի, մի կին,
Ձանոնք թողով անխելճար,
Գնաց մէկէն դէմ թուրքին,
Ազգի փրկել կը յուսար,
Խաբուած էր։

Կերաւ ցուրտը, կերաւ կուրծքին,
Թշնամիէն ալ մի «Տիպիկ»,
Առաւ «փունթան», կարհամարէր,
Հիւանդութիւն՝ թէեւ սառտիկ,
Քաջ մէկն էր։

Շատ դիմացի դրօշ ձեռին,
Զիթօ՛, զիթօ՛՝ միշտ իւր բերնին
Թշնամիէն էր Տէրութիւնը,
Ինչպէս լինէր յաղթութիւնը,
Չէր ըլլար։

Չէր կարող ալ երթալ երկիր,
Տաճկաստան էր իւր տեղը՝,
Ուզեց անցնիլ Պուլկարիա,
Ընտրեց իրեն նա վառնա,
Ափսո՛ս։

Չունէր դանկ մ'իսկ գրպանը,
Ոչ ալ պատառ մ'նաց ուտելու,
Իրախոտի գործարանը,
Թանձն առաւ աշխատելու,
Ինչ ընէր։

Հիւժեց, կոեց զիս հոս ձգեց,
Ո՛հ, նպատակիս չհասած,
Կ'ըսէր, կ'ողբար հողերից,
Խեղճ Տիպիթիւն՝՝ չունէ հատած,
Թշուառը։

Ձայնը կարծես երբ կը խօսէր,
Փլատակ մ'տակէն կ'ընէր,
Զիթօ՛, զիթօ՛՝ բաթիթազմու՞մ,
Կէս ձայնով մը կը մըմնջէր,
Մեղք քաջի՛ն։

Օրը եկաւ, սուգը պատեց,
Խեղճ Տիպիթիւն երեսը,
Ձայն ալ չկար, ձեռքերով էր,
Ինչ որ կ'ուզէր, ըսածը,
Հասած էր։

Չորեքշաբթի, աւագ օրը,
Առաւօտուն անկողնի մէջ,
Առաւ ձեռքն բարձրը,
Շարժեց անգամ մը օդին մէջ,
Իբր գրօ՛ւ։

Պոկունքներէն խօսք մը թաւ,
Այլ աւա՛ղ որ չիմացուեցաւ,
Ճօճեց բարձը անգամ մ'ալ,
Զիթօ ըսել կարծուեցաւ,
Վերջինն է՛ր։

Ձարկաւ գետին այդ բարձը,
Ինկաւ մէկէն երեսն ի վար,
Անուն սալով որդեգրը,
Եւ ալ չեղաւ իւր ձայնը,
Մեռած էր...։

Չէ՛ք զարմանար երբոր ըսեմ,
Ճանճ մը չունեցաւ այցելու,
Խեղճ զինուորին ճակտին գիրն էր,
Անգնահատ մեռնելու,
Գէշ աշխարհ։

Երկու փայտի լաթ մը փաթտած,
Տեսակ մը ճաղ մօտեցուցին,
Դառայք զանի նման կոճղի,
Ատոր մէջը գլորեցին,
Դիակ մ'էր։

Չիմացանք թէ ուր տարին,
Սուրբ մարմինը մարտունչին,
Խօսքն ալ չեղաւ իւր թաղման,
Ե՛րբ խորհուրդը կատարեցին,
Կորաւ նա։

Այս է բաժին գործող անձանց,
Անապոյտներ մեծամեծաց,
Գնա՛ մեռիք, չես փնտռուիր,
Քանի ծառայես տէրութեանց,
Այսպէս էր։

Վառնա, 6 Ապրիլ 1898

ԹՕՁԷ

(*) Կեցցէ։ (**) Աղբիւնուպոլսեցի էր։ (***) Այս էր իւր անունը։ (****) Կեցցէ՛, կեցցէ՛՝ Հայրենիք մեր։

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷ
Նիշուէ, 28 ապրիլ 1898

Բաւական ժամանակէ ի վեր մըսադիր էի արտասահմանի ունէ մէկ թերթի հետ թղթակցելով տեղեկագրել Ամերիկայի հայ գաղութականներու վիճակը, զոր կուսակցութիւնները իրենց անհատական ու կուսակցական շահերուն ներդաշնակեցնելու համար, իրականէն բոլորովին ապրեք կերպով նկարագրած են։ Իրերը իրենց իսկական գոյնովը երեւան բերելու համար, «Տարոս»-ը բարեպատեհ առիթ մը կ'ընծայէ ինծի, որովհետեւ վստահ եմ թէ՛ Պուլկարիա հրատարակող և ոչ մէկ թերթ, ունէ կուսակցութեան մը շահերը աշտպանելու յատկացուած էջերը չը պիտի նուիրէր իմ անաշտ թղթակցութեանս։

Թէեւ տասներկու տարիէ ի վեր հայ գաղթականութիւն մը գոյութիւն ունի Ամերիկայի մէջ, սակայն ցաւալի է ըսել թէ՛ մինչեւ հիմա ճշգրիտ վիճակագրութիւն մը չենք ունեցած, չը նայելով որ ունինք երկու վարդապետներ, երեք խմբագիրներ, բազմաթիւ ուսուցիչներ և բաւական թուով զարգացած եւ իրատարադներ։ Ամերիկայի հայ գաղթականներու թիւը 13,000 էն աւելի է, իսկ կուսակցական անհատներունը հազիւ 420։ Հոս՝ Նազարէկեանները, բացի մէկ քանի ողորմելի էակներէ, որոնք հրապուրուած Նազարէկի շառլաթա նութիւններէն, կը ջանան ու կը աշխտեն դեռ սքողել անոր չարագործութիւնները, ամէնքն ալ ձուլուած են նորակազմ Հնչակեան կուսակցութեան հետ, որ ստուար մեծամասնութիւն մը կը կազմէ։ Մնացեալ երկու կուսակցութիւններու անդամներու թիւը մէկզմէկու հաւասար է գրեթէ։

«Թէ ինչո՞ւ 13,000 հայ երիտասարդ գաղթականներու մէջ այնչափ ցանցառ են յեղափոխականները. մի՞թէ անոնք միայն կը հետաքրքրուին տառապեալ Հայաստանի վիճակովը, մի՞թէ մնացեալ ստուար մեծամասնութիւնը կ'արհամարհէ յեղափոխութիւնը»։ Այս հարցման պատասխանը բնականաբար պիտի ըլլայ ոչ ոքի պատճառը սա է թէ՛ քիչ շատ խոհուն ու լուրջ մէկը, բնականաբար չը պիտի ուզէր հեռուիլ կարգ մը տղայական խումբակներու, որոնք՝ ձգած բուն թշնամին, ժողովրդեան դէմ կը լարուին ըսելով թէ՛ «Մեր ֆէտա յիներու ուսմանը արդէն պայթիւմ են վասպուրականում և Սուրբ Թանական մայրաքաղաքում, եթէ կ'ուզէք միանալով աշակցիլ Դաշնակցական կուսակցութեան, լաւ եթէ ոչ մենք այս օրէն արդէն կուրկը մղենք այդ անտարբեր և ոչ յեղափոխական տարրերին դէմ»։

Այսպէս էր որ կը խօսէր Դաշնակցականներու աշխարհահռչակ ներկայացուցիչը Ամերիկայի ազատ մէկ սրահին մէջ, որ Դաշնակցութեան

գուրս յեղափոխութիւն չի ճանչնալու բարի սովորութիւնն ալ ունի։

Հոս՝ նորակազմ Հնչակեանները, բաղգատմամբ Դաշնակցականներուն աւելի մեծ համակրութիւն և վրասահութիւն կը վայելեն ժողովրդին կողմէն, ինչու որ Դաշնակցականները մեծ մասամբ 12 էն 16 տարեկան տղաներն են, անանկ որ աւտոնց անդամական ժողովները կատարեալ դպրոց մը կը ներկայացունեն, որ վարժապետի պաշտօն կը կատարէ ժընէվէն եկած ներկայացուցիչները, իսկ գերբի դեր՝ Հնչակեան մասնաճիւղէն գողցուած շըլըշաբրակները, որուն մեծ ընդունակութիւն ցոյց կուտան իր փոքրիկ աշակերտները։

ՋՈՋԻԿ

Հանութեամբ կ'արտաստենք «Իրաւունք» լրագրէն՝ մեր աշխատակից Տիար Տիգրան ձգնաւորեանի նկատմամբ հետեւեալ գնահատելի դրուագը, միեւնոյն ասեմ հրապարակաւ հարցնելով «Իրաւունք» ի խմբագրապետ Տիար Պօննուհեանի քէ ինք՝ իբրեւ միեւնոյն հայրենիքի զաւակ ի՞նչ տեսած ու ի՞նչ լսած է Տիար ձգնաւորեանի համարային կեանքի նկատմամբ։

Ի տղայ տիգր մօտէն քէ հեռուէն ծանօթ են մէկ մէկու գործին, ուստի եւ պատասխանն անխուսափելի է տալու համար իր ուղղամտութեան ու արդարաբարութեան յայտնի պատգամը։

ՏՐԱՐ

ՏԻԳՐԱՆ ՃԳՆԱՒՈՐԵԱՆ

Արժանահաւատ անձ մը մասնաւոր նամակի մը մէջ գրած է մեզ հետեւեալ տողերը, զորս անկողնապահութեան պարտք մը կը համարինք հրատարակել իր խնդրանքին համաձայն։

«Տ. Տիգրան ձգնաւորեանի վերադարձած գաւառականութիւնը պարզապէս անհաւատարի է ինձ համար, երբ աչքիս առջեւ կը բերեմ անոր անցեալը և իր գովելի մասնակցութիւնը ազգ. գործերու մէջ։

Տ. Տիգրան ձգնաւորեան իր պատանեկութեան հասակէն, ազգային գործերու և պաշտօններու մէջ անած ու մեծցած, Եւգոկիոյ մէջ Ներոէսեան վարժարանը հիմնելով, վեց տարի շարունակ անոր բարեկարգութեան համար բարոյական և նիւթական զոհողութիւններ ըրած եւ այս կերպով մեծապէս ստատարած է կրթութեան գործին իր քաղաքին մէջ։ Նաեւ տեղւոյն քաղաքական ժողովին ատենապետութիւնը վարած է ժամանակ մը ազգին օգտակար կերպով։

Եւ Պոլսոյ մէջ հաստատուելէ ետքը, որոյ առեւտրական հրապարակին վրայ պատուաւոր դերք մը գրուել յաջողեցաւ, խիզախութեամբ Ուսումնասիրաց հոշակաւոր ընկերութեան ատենապետի պաշտօնին կոչուեցաւ, զոր վարեց իր առեւտրական բազմադիմի զբաղումներուն մէջ ժամանակ

նակ գտնելով։ Նաեւ ի. Պոլսոյ ազգային ժողովին անդամ ընտրուած է երկու գաւառական վիճակներէ և իր այս պաշտօնը խղճամտութեամբ վարած։

Տ. ձգնաւորեանի այս անցեալը ցոյց կուտայ թէ նա տղայ հասակէն կրած է ազգային ոգի, որ զինք անընդունակ կ'ընէ ա՛յն վատութեան, զոր կուգն իր վրայ ձգել։

ՍՊԱՆԻԱ ՎԷ ԱՄԵՐԻԳԱ ՍՈՒՀԱՐԷՊԵՍԻ

Մատրիտայէն արեւմտեան պիւր թէթէկրաֆա նազարէն սապահ Սմէրիկա կէմիլէրի Սիէնֆուկոյը (Գուպա) թօքա թուրքալար, թաիֆէլէր պիւր գաշ տէֆա կէրի տաիլէր իչին գարայա մուհիմմաթ հարպիլէ չը գարմադ իսթէտիլէր իսթ տէ մուվաֆուդ օլմաուրար։ Սպանիալար ակթէշ իտէլէք Սմէրիկալար պիւր չօգ զիտնաթլա կէրի չէթիլէյէ մէնպուր իթմիլէր տիւր։

Սապահ, ալթը Սմէրիկա կէմիլէրի Գաուրնաթը թօքա թուրքալար։ Սպանիալար Սմէրիկալար թարաֆընտան օլան ակթէշ ճէվապէն իւլ թօք Էնտաթիլ իթմիլէր տիւր։

Քալէյէ իթմիլ Էնտաթիլ օլան 300 կէօնիլիլէր չէօնիլէք քէնտիլէրիսի տիւլմանէ գարլը միւսաֆաա իթմիլէր վէ պու վէճիլէ տիւլմանը գարայա չըգմաուրնա մանի օլապ պիւր չօգ զարար վէրմէսինէ սէպէպ վէրտիլէր։ Տիւլման տէնիլին էն կիւլէրինէ չէթիլէյէ մէնպուր օլար Պիւր միւլգիմ 7 սպանիլ ճէր օլմըլար տըր։ Եէհիթաէ սուլ ու սալաշ (խաղաղութիւն) հիւքմ ֆէրմա օլմապուտա տըր։

Բիւլուէսթաէն մայիս 12 տէ ալընան պիւր իսպէլէ կէօք Գաուրնա մուհարէպէսի պիւր սապահ տէվամ իթմիլ Պիւր պայրադուար վէ տէօրթ Սմէրիկալար գաթիլ օլմըլար։

Սպանիալար պաշլընա Ուիլթիլգէրինէ ակթէշ իթմիլէր տիւր։

Ուիլթիլ թօքիլիլին գօմանտանը տաիլ տաիլիլ պօլընաղը հալտէ պէշ քիլի ճէր օլմըլար։

Վալինիլթօն մէպուսան մէճիսինին ումուր իսպիլիլէ իտալէսի չալա սաալարընն պիւրէշտիլիլ մէսի իչին վէրիլէն պէյաննամէի գապուր իթմիլ տիւր։

Ինկիլթէրաի ճէտիտ սուլարընտա պիւր չօգ թօքիլիլ կէօրիւտիլինէ տաիլ Սէթիլէրիլ Ալէն պիւր չօգ թէթէկրաֆալար ալմըլ տըր։ Պուլար պահիլիլ նէզարէթիլին պիւրիլիլէճէթ իմիլ։

Վալինիլթօնտան չէթիլէն պիւր թէթէկրաֆա նազարէն Սան-ժուան տը Բօլթօ Ռիքօ իւլգէրինէ հիւքիմ իթմէյիպ պէթիլմէսի իչին սաիլալ Սապահա Էմիլ վէրիլմիլտիւր։

Ֆիւր տը Ֆուստան ժուռնալ կաղէթասընա չէթիլէն պիւր թէթէկրաֆա 9 կէմիլէն իսպարէթ Սմէրիկա տօնանմաթ Բօլթօ Ռիքօլը թօքա թուրքալար օլմըլը օգուլմըլ տըր։

Ամիլալ Սապահ պիւր գաշ կէմիլէ Սան ժուան տը Բօլթօ Ռիքօ ալմըլարընա միւլապէլէթ իտիպ Սօնօ գալէսինի թօքա թուրքալար վէ իսպարալ իթմիլ տիւր։

Էնէպիլ սէֆիլիլ վէ թաիֆէլէր չէհիլին իչէրէրինտէ կիւլէնմէքտէ իմիլէր։

Սէն Բօմաուտան Սթանտարտ կաղէթասընա չէթիլէն պիւր թէթէկրաֆա նազարէն Սան ժուան տը Բօլթօ Ռիքօ սապահ թօքա թուրքալար 2 Սպանիա կէմիլէ մահլ օլմըլար։

Սէթիլ օսաթ մուգալէթալտէն սօնրա Սան ժուան թէպիլմօլմըլտըլ սէթիլէնիլ։

Հէրալա կաղէթասընն եազարընա կէօք Մաք քիլիլ Գուպա սահիլինէ աղիմէթիլ պիւր հաֆթա թէթիլ իթմիլ տիւր։

Հալման գապիլէսի միւլաթէմէրալթ (քօլմի) նազարէն Միւլթէմէթիլ Սմէրիկալարն հիւքիլմիլտէն տօլար պիւր չէթիլէթիլմալ իրալ իչ չէհիլին հիւքիլմալիլթիլիլ միւսաֆապա մէնպուր պօլմըլտըլըն քէնտիլիլէն պիւրիլմիլ տիւր։

Պիւր թէթէկրաֆա կէօք Սմէրիկա օրտուսը գարիպէն Բօլթօ Ռիքօլը մուհարէլէ իտէճէթ իմիլ։

Գօրէսթօնտէնցիա կաղէթասընն եազարընա նազարէն Էհալի պիւր հէյէճան Եանքիլէրին հիւքիլմիլտէ պէթիլմէքտէ իմիլ։

Մուհիլմալթ հարպիլէի հալիլ իքի կէմիլէր Բօլթօ Ռիքօլը վալմըլ օլմըլար, չէհիլտէ պօլմըլտան գալիլէ պիւր գաշ այ Էհալիլ քիլիլթիլ իտէր իմիլ։

Իքի Սմէրիկա կէմիլի Գարալնաս պօղաղըն իլիլ իթմէք իսթիլմիլէր իսթ տէ, տիւլման թարաֆընտան իւլգէրէրինէ ակթէշ եալմըլընտան ըրի ճալթէ մէնպուր օլմըլար։

Մատրիտայէն չէթիլէն պիւր թէթէկրաֆա կէօք Սմէրիկա կէմիլէրի թարաֆընտան թապիլ օլմըլտան Բօլթօ Ռիքօ կիւլմէյէ մուլալֆաթ օլմըլ տըր։

Ֆիլիլիլիլիլ քալիլթէն Ժէնէրալ թարաֆընտան չէթիլէն պիւր թէթէկրաֆա նազարէն տիւլման գալիլթի վէ արսէնալ իսթիլ իթմիլ։ մուհարէլէ տէվամ իտիլար, լալիլ Մանիլիա չէհիլ թօքա թուրքալար։

Մուհարէպէտէն զիլաթ տաիլիլ գարըլըլըլար վէ Էթմէք Ֆիլիալթիլին եիւքիլմէսի Սպանիա հիւքիլմէթիլ թաճիլ իթմէքտէ տիւր կաղէթալար Էթմէք Ֆիլիալթիլին էօնիլին ալմադ իչին իրաճալթ մէնն իթմէքտէն պաշա հիլ պիւր չարէ պօլմըլտան պէյան իտիլար։ Մատրիտայէն արեւմտեան թէթէկրաֆալար իման միւլալիլէրի պօլալալը հալիլ պիւր գաշ կէմիլէրին Պարսէլոնա, վալէնիա վէ Սանթանարէտէն աղիմէթիլ մէնն իթմիլէր։

Գալիլթէ մուհարէպէտէն Սպանիալարն վէրտիլիլ զալալթ 10 զըրիլ, պիւր գաշ թօքիլ, իքի նալիլիլ կէմիլէրինտէն իսպարէթ տիւր։ Թէրալիլիլ քէնտիլիլ իսպարալ օլմըլ։ մէճիլմալարն վէ վէթալթ իտէնիլիլ տէթիլ 1200 տիւր։ Սմէրիկալար եալմըլ 8 մէճիլմալ վէ 5000 տօլար զարար վէրմիլէր, լալիլ անլիլին եէտիլ զապիլթիլ կէյէն էյէտիլն գըլմէթիլ 5 միլիօն տօլար թէճալիլ իտէրմիլ։

Սիլիլ առալարընա եազարն ըՍպանիա վէ Սմէրիկա տօնանմալար արալընտա կէրիլ տէնիլթիլ պիւր մուհարէպէ վուգու պօլմըլ իտէտէ պու իստալտա թաֆիլթիլ լալարմէ հօգ տըր։

Ամիլալ Սապահին եէտը գօմանտալընտա պօլմըլտան օրտու Հալթիլին չիմալընտա վէ 17 Սպանիլ կէմիլէրի տաիլ Բօլթօ Ռիքօլըն չիմալ ճիլթիլինտէ միւլալէտէ օլմըլար։

Ֆիլուէսթէ վալար օլան Ալման թալիլալար Հալթիլին չիմալ զարալ թարաֆընտա էօլմէտէն սօնրա չիտալթիլ թօք սէտալար իչիլթիլիլ իտէթիլ սէթիլմիլէր։

ՄԻԹԵՖԵՐԻԳԱ

Տէվէթիլ թարաֆընտան Պալար Ալի վէրիլէն պիւր նօթա հապընտա միւլալթիլ իթմէք իչին ելըլըլտա վիւքէլտան միւլթէլէքիլ պիւր մէճիլապու ու իճթիլմալ իթմիլ տիւր։

Մըլըլ իտիլիլին ամընաղալտէսի Ալմէտ Սաֆիլտալին բալա քէնտիլալար Ալմէտ Ֆուստալար ու էվիլթիլ տարալիլիլ իլէ ճէր իթմիլ։

Միլմալ տալիլ պէթիլմալմըլ լալիլ պալար սաիլ չէհիլիլտէ գանլը գալիլալար զուհուր իթմիլ։

Պուլկար հիւքիլմէթիլ հէր նէ գալտար Ռուսիալար հիւքիլթ իտէն գալարթիլարն եէնիլտէն օրտու գալպու իթմէլէ գարար վէրմիլ իտէտէ անլիլին գըսմըլ աղամըլ մէմիլտէն իլ իմիլէր։

Վէտէմօլթիլ ուս կաղէթալար Ռուսիալար գարըլ եազան պուլկար կաղէթալար ճէվապէն եալմըլ էթիլար ամիլ տէյիլ, գալիլթիլ տալիլ պու գալարա միւլալիլ պօլմըլտըլարընտան անլիլին ուս օրտուստա գալաճալարըն վէ Պուլկարիլալ ալալթ իտէճէթիլ իչին չըգան չայէալարըն պիւլալիլ թիւն էսասըլ օլտըլըն պէյան իթմիլ տիւր։